

Հ Ն Չ Ա Կ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ա Ջ Ա Տ Ջ Է Յ Թ Ո Ւ Ն

1895 — 1896

Տարին, որ վերջանում է, լի էր դառնութեամբ ու յուսով, տարակուսանքով ու համբերութեամբ, սարսափով ու յաղթութիւններով: Իրար ետեկից յաջորդաբար գլորվող դէպքերը գրեթէ իւրաքանչիւր օր փոփոխում էին հայկական խնդրի կերպարանքը, մի կողմից նրան աւելի ու աւելի հասունացնում, միւս կողմից աւելի ու աւելի բարդում:

Սարսափելի է այն կռիւր, որ տեղի ունի թիւրք կառավարութեան և Հնչակեան Առասկեցութեան մէջ, այս վերջինս միշտ միակը լինելով պատերազմում հայութեան կողմից: Աւելն, ի հարկէ, անհաւատար է, բայց նա մղվեցաւ մեր կողմից ամենավճռական, քաղաքագէտ ու պատուաւոր կերպով, մի բան, որ խոստովանում է նոյն իսկ մեր թշնամին: Մեր կռիւր ստացաւ շատ աւելի մեծ նշանակութիւն ու փառաւոր կերպարանք նաև այն պատճառով, որ բոլոր հանգամանքներն աւելի քան աննպաստ էին մեզ համար, ամեն օր առաջ եկած լինելով նորանոր դժուարացողութիւն խոչընդոտներ, արդեւքներ մեր ընթացքի առաջ:

Այդ կռիւր դեռ հեռի է վերջանալուց: Այսօր մի կողմից հայերս խրված ենք մեր արեան տիղմում, տասնեակ հազարները մեզնից ամենազագանային եղանակով մորթվելով թշնամի ձեռքի տակ, մեծահաշիւ աւերումների ու փնտնների ենթակայ և հէնց այժմ ամեն-մի վայրկեան կոտորվելով, որի վախճանը չենք կարողանում դեռ նախատեսել: Միւս կողմից Յեղափոխական Առասկեցութիւնս ցոյց տվեց մէկ անբռնակայելի եռանդ, յարատուութիւն, հաստատամտութիւն և ընդունակութիւն ամենամեծ քաղաքական գործերի նախաձեռնութեան, ինչպէս Մ. Պօլսի 18 Պեպտեմբերի պատմական Յոյքը, ինչպէս Ալիկիլայի, Օէյթուռի այն սքանչելի, այն հրաշալի ապստամբութիւնը, որ մինչև հիմա — ահա երեք ամիս է — յաղթական կերպով տևում է, ամբողջ աշխարհին զմայլանք ու զարմանք պատճառելով, տևում է, միշտ ծածանելով Հնչակեան դրօշը, Ազատութեան դրօշը, միշտ աւետելով մեզ Հնչակեան բանակների նորանոր մեծ, փառաւոր, ցնծալի յաղթութիւններ,

որոնց նմանը հայութիւնը դեռ չէ տեսել Ռուսիանայ թագաւորութեան անկումից ի վեր:

Նշանակելի է կէտ. Հնչակեան Առասկեցութեան ցոյց տված մեծ զօրութիւնը նկատալի էր մինչև իսկ այն վայրերից շատերում, որտեղ պատահեցան կոտորածներ: Օր. Արդնկա, Հաբին Գարահիսար, Մարզուան, Մարաշ և այլ շատ տեղեր, նոյն իսկ տեղացիների տեղեկագրութեան նախելով, կոտորածները կարող էին շատ աւելի բազմազոհ ու աղէտալի լինել, եթէ այն տեղերը զոյութիւն չունենային Հնչակեան կազմակերպութիւններ, որոնք կամ դիմադրութիւններով և կամ նախազուշութիւններով աջողել են առաջին առնել աւելի մեծ կոտորածների և կամ նոյն իսկ տեղ-տեղ բոլորովին արգելք հանդիսանալ թիւրքերի վայրագութեան, ինչպէս օր. Հաճիսում, Ատանայում, Սուէտիայում և այլն:

Սարսափելի դասը, որ հետևում է դրանից, դառնութեամբ կը լցնէ ամեն-մի ճշմարիտ հայի, ճշմարիտ մարդու սիրտը: Ամեն-մէկը կը հասկանայ այժմ պարզօրէն, թէ որքան յանցաւոր են պատմութեան առջև այն ամենքը հայերից, որոնք անխիղճ կերպով, ամեն տեսակ մեքենայութիւններով միշտ ջանք են անում արգելք ու փնտաստար լինել Հնչակեան Առասկեցութեան աւելի ու աւելի զօրացման, Առասկեցութեանն, որ, այսպէս կամ այնպէս, այսօր, որպէս և վերջին ութ տարւայ ընթացքում, միակ առաջնորդն է հայ ժողովրդի դէպի փրկութիւն, միակ համեստ զինուորն է դուրս եկած մարտադաշտ յանուն հայութեան ազատութեան, միակ ղեկավարն ու պաշտպանն է հայկական դատի, ղեկավար ու պաշտպան իր արեան դէով: Եթէ որ և է այլ «մարմին» այդ իրական ճշմարտութեան դէմ փորձէ խօսել, մենք հրաւիրում ենք նրան համարձակվել ասել իր նկատմամբ նոյնքան, որքան մենք ասում ենք Հնչակեան Առասկեցութեան նկատմամբ, զրոս համար բաւականանալով ոչ այլ ինչով, եթէ ոչ միայն նրբանով, որ մասնանիշ ենք անում լոկ պատմական փաստերն ու իրողութիւնները:

Օէյթուռն ալմա է, եղբայրներ, և մեր ձեռքին է այսօր հայկական դատի ղեկը, մեզնից է կախված չը թողնել այն մեռցնել, թէկուզ տասնեակ

ու տասնեակ հազարաւորների կեանքի գնով: Ար-
 ռիւր տեղի ունի, նա պէտք է շարունակվէ և նա
 պէտք է վերջ ստանայ մեր և միմիայն մեր յաղ-
 թութեամբ:

Իսոյց լաւ զիտենանք, որ միայն սուլթան մար-
 գահէջը չէ մեր կատարել թշնամին, այլ թէ մենք
 ունենք մէկ ուրիշ սոսկալի թշնամի, որ իր դա-
 ւերը սկսաւ լարել հէնց Սասունի դէպքերից ի
 վեր և որ մինչ այսօր շարունակելով իր ստոր ին-
 տրիգները Վ. Պօլսում, արգելք է հանդիսանում
 մեր դատի լուծման, միաժամանակ տասնեակներով
 ու քսանեակներով հայեր ձերբակալելով հէնց
 նոյն իսկ իր երկրում: Այդ երկրորդ զիտակաւոր-
 ված սոսկալի թշնամին ուսաց կառավարութիւ-
 նին է: Լաւ իմանանք այդ, որովհետեւ նրան նե-
 ցուկ ունենալու շնորհով է, որ սուլթան ոճրա-
 գործը յանդգնում է լրբաբար ու գազանաբար մեր
 արեան ծովի մէջ խեղդել ապ մեզ: Լաւ դրօշ-
 մենք այդ կէտը մեր մտքում, մինչև որ պատմու-
 թիւնն իր սե էջերում կարճանագրէ մեր հիւսի-
 սային բռնակալութեան այդ ստորաբարձ դերը:

Փոխարէն արցունք թափելու մեր աղէտների
 ու կորստանների վրայ, անվեհերութեամբ ու սուրբ
 զգացումով ձեռքերնք ընկածների արիւնից գոյա-
 ցած Ռուբիկոնի կուրծքը և երթանք դէպի առաջ:
 Հպարտ լինենք մեր յաղթանակներով, աւելի՛ հը-
 պարտ լինենք մեր տանջանքներով, որոնց դժոխա-
 յին բովից անցնելով, մենք կը հասնենք սահմանը
 նոր փառաւոր ժամանակների, մեզ ժպտող ար-
 շալոյսի:

Ունենանք արիութիւն, ունենանք վստահու-
 թիւն մեր վրայ: Ամուր է դեռ մեր յեղափոխական
 զննանք, վառ է մեր կրակը, որի վրայ միշտ տա-
 քացնենք մեր ապստամբական երկաթը և կռիւնք,
 կռիւնք այն՝ մեր ազատութեան մուրձով և սրէնք
 այն՝ պատերազմելով մինչև վերջ: Ո՛չ, մեռած չէ,
 և չի՛ մեռնիլ այն ազգը, որ ունի Օչխիթուններ:

Կ Ե Ց Ց Է Զ Է Յ Թ Ո Ւ Ն

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ԶԷՑԹՈՒՆԻ ԶՕՐԱՆՈՑԻՑ.
 (ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ.)

7 նոյեմբ. 95.

Չահանի օսմանեան բանակը յաղթվելով՝ եր-
 կու ժամ ետ նահանջեց: Թէկէմէլքցիները յաղ-
 թեցին Նէտիրի բանակը:

8 նոյեմբ. 95.

Եսայի՛ճ Օղլին բանակը յաղթվեցաւ Շիվիլիկի
 հայկական բանակէն. թուրքերէն շատ սպանուած.
 հայերէն միայն 2: Կապանը պաշարուեցաւ 600
 սէկմէնով: Նշանաւոր Եսայի՛ճ Օղլին սպանուեցաւ:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

(ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ.)

17 դեկտեմբ. 95.

Գեկ. 1-ին (Հ. Տ.) Օչխիթունի Հնչակեան
 բանակները մեծ կռիւներ ունեցան օսմանեան զօր-
 քերուն հետ. կռիւները աւելցին ամբողջ երեք օր:
 Օսմանեան բանակը չարաչար պարտութիւն և
 ջարդ կրելով ետ քաշուեցաւ դէպի Մարաշի կող-
 մերը, դաշտին վրայ թողլով խիստ բազմաթիւ
 զերի, հազարաւոր սպանուածներ և մեծ քանա-
 կութեամբ զէնքեր և այլն:

ՀԵՌԱԳԻՐ „Daily News“-ի.

Կ. Պօլիս, 30 դեկտեմբ. (Ն. Տ.)

Տեղեկութիւնները, որ ես ստի ամենաստորգ
 աղբիւրներից, բաւական լոյս են սփռում վերջին
 օրերի հակասական լուրերի վրայ Օչխիթունի նը-
 կատմամբ:

Երկու շաբաթ առաջ (դեկ. 16-ին) Օչխի-
 թունցիներն ուղարկել են և յայտնել թիւրք զօր-
 քերի հրամանատարին, որ նրանք կերակրել են և
 լաւ են վարվել իրանց թիւրք զերիների հետ: Նը-
 բանք այժմ էլ ցանկութիւն չունեն սպանելու զե-
 րիներին, բայց կերակրել դրանց այլ ևս չեն կա-
 րող: Այդ պատճառով եթէ թիւրք իշխանութիւն-
 ներն ուզում են ազատել թիւրք զերիներին, այն
 ժամանակ նրանք պէտք է ուղարկեն դրանց հա-
 մար իրանց պէտքերի պաշար:

Այդ յայտարարութիւնը ստանալուն պէս
 Մուստաֆա Ռէմզի փաշան հեռագրեց անմիջա-
 պէս պալատ: Վերջին երկուշաբթի (23 դեկ. Ն.
 Տ.) սուլթանը հրամայեց, որ պահանջված պա-
 շարներն ուղարկվեն: Միևնոյն ժամանակ, իմաց-
 ված լինելով, որ եւրօպական պետութիւնները
 պէտք է միջամտեն յօգուտ Օչխիթունի, սուլթա-
 նը հրամայեց, որ ամիջապէս յարձակում գործեն
 Օչխիթունի վրայ: Տեղի ունեցան երկու ընդհա-
 րում, որոնց հետևանքն արդէն իմաց է արված:
 Արգելելու համար էր եւրօպական միջամտութիւնը,
 որ Օչխիթունի կողմերի թիւրք պատերազմական
 հրամանատարը լուր հասցրեց Մարաշի եւրօպա-
 կան հիւպատոսներին, թէ իբր Օչխիթունն ընկել է:

ՀԵՌԱԳԻՐ ՌԷՑՏԷՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ.

2 Յունվար 94.

Պետութիւնների գեսպանների միջն բողոքութիւնը՝
 Չէխիթունի ապստամբների հետ բանակցելու ապստա-
 մութեան դադարման նկատմամբ՝ ընդունվեց և ար-
 տաքին գործերի միտար Թէվֆիզ փաշան անձամբ հա-
 ղորդեց գեսպաններին: Գեսպաններն իրանց Հալէպի
 հիւպատոսներին կատարեալ ազատութիւն տվին այդ
 բանակցութեան նկատմամբ և ապստամբների ապահով
 վիճակի մասին. ապստամբութեան դադարումից յետոյ:

ՋԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1-ԻՆ — ՀՈԿՏ. 26.

ՃԱԿԱՍԱՄԱՐՏԵՐԸ. — ՀՆՉԱԿԵԱՆ ԲԱՆԱԿԻ ՅԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — ԶԵՅԹՈՒՆԻ ԵՒ ՋՕՐԱՆՈՑԻ ԳՐԱՒՈՒՄԸ. — ԹՇՆԱՍԻՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ. — ԹԱՆՐ ՎԻՃԱԿ.

(Շարունակութիւն) *

ՋԵՅԹՈՒՆԻ-ՋՕՐԱՆՈՑԸ.

Այլ արդարև բռնութիւնն էր, որ հոգևարբի մէջ էր... Գերեզմանի դուռն էր այն ճիւղը, որ եօթնագրէսեան վեշապի նման Զէյթունն իր ճանկերի մէջն առած, 17-18 տարիներէ ի վեր հայութիւնը մահացուցեր էր... մի քանի վայրկեան յետոյ պիտի մեռնէր, վերանա՛ր այն դժոխքը, որի մէջ լեցուած էին հայերի տանջանքները, հարստահարութիւնները և անէծքը... Պիտի ընկնէր Սարգսն ապալը իր խրախճանքներով, պիտի առնուէր Զէյթունի «Չանագ-Գալէն»...

Վերջապէս անձնատուութեան յայտարար նշանը տրուելէ յետոյ պայման դրուեցաւ, որ առաւօտուն պիտի յանձնուին: Իսկ պաշարող հայկական բանակն իր նոյն դրութեան մէջ մնալէ յետոյ, երկու կողմէն ևս հրացանածգութիւնը դադրեցաւ գիշերուան ճիշդ ժամը 4-ին, ամբողջ 50 ժամ հրացան նետելէ առանց դուրս գալարի և 60 ժամ պաշարելէ յետոյ:

Գնդապետն իսկ զարմանալով խօսեր էր. «Եղբայր, բոլոր ազգերն ալ պատերազմ կրնեն, բայց գոնէ միջոց կուտան ննջելու, հանգստանալու և կերակուր ուտելու, բայց սոքա 50 ժամ հրացան նետեցին ու միւս կողմէ հրդեհով մեզ սարսափեցուցին...»

Բարեգուշակ գիշերն անցաւ շատ քաղցր ու ոսկեղէն երազներով... այդ գիշեր միամիտ և բարի կիներ ու ծերուկները շատ երազներ տեսեր էին. ոմանք կուգային խրախուսել, որ «այս ինչ կամ այն ինչ սուրբը եկեր և յայտներ է, որ յաջողութիւնը հայերունն է...» Այդ գիշերը ցնծութեան թմրեցուցիչ ու ըզգրլիսիչ հրճուանքի գիշերն էր, որ շատ գանգաղ կը յառաջանար ճշուած ժողովրդին բերելու կարմիր, երջանիկ արշալոյսն ու պայծառ, ջեռուցիչ արևը...

Վերջապէս կարմրեցաւ արշալոյսը... հիւրիներու և հերկնական գիցուհիներու ժպտուն, շիկնոտ ու ջինջ այտերի շէկութեամբ... Աղջոյն քեզ, ո՞վ Ազատութեան կենսատու դիցուհի... Աղջոյն քեզ, հնոցավատ արշալոյս... Աղջոյն քեզ, տուողիդ բարեաց ու կենաց... Աղջոյն քեզ, նոր օր, նոր Գարագիւղ... Աղջոյն քեզ, Նոր Զէյթուն...

Հոկտեմբեր ամսի 18, չորեքշաբթի օրուան առաւօտեան էր... երջանիկ առաւօտը: Ժամը 12-ի տուններին Զէյթունի Ս. Աստուածածնայ վանքէն դուրս եկան մի խումբ ձիաւորներ և մի քանի հազար սպանազինուած ժողովուրդ...

Ձիաւորների առաջ կար կուսակցութեանս Ներկայացուցիչն իր քով ունենալով իր ընկեր Հրաչեան: Ձիաւորների մէջ նշանակելի էին Սարգիս աղա Նորաշխարհեանը, Ֆրանուզի վանահայր Բարթողիմէոս վարդապետը, Վասիլյանեան Պապ աղայի իշխանազուն եղբայրները, Ֆրանուզէն Տնտեսեան Աւետիս աղան, Պըլլար-

եան Գէորգ աղան և Զէյթունի իշխանազունները, ժողովրդի հետ միասին երգերով ու կեցցէներով զօրանցի վրայի բլուրը, պատասպարանների ետին: Այդտեղ զօրանցին պատգամաւոր գնացին պ. Հրաչեան, Բարթողիմէոս վարդապետը, Սարգիս աղան և Պոյամեան Արթին չափուշը: Զօրանցի դռան մօտ միացած պ. Ապահի հետ՝ բանակցութեան մտան գնդապետի և ըսպանների հետ, որոնք նախապէս չուղեցին, բայց ի վերջոյ սպանաշիքի ներքև կնքեցին անձնատուութեան թուղթ: Այդ ժամանակ ժողովրդային պատգամաւորութիւն գալով՝ կուսակցութեանս ընդհ. Ներկայացուցիչը վար իջեցուցին մի հարթ տեղի վրայ, զօրանցէն 200 քայլ հեռավորութեամբ, ուր եկան գնդապետն ու ըսպաններն անձնատուր լինելու:

Իսկ կուսակցութեանս անման գործիչները՝ «Աւօ» զօրագնդի և ժողովրդային նշանաւոր ապստամբապետների հետ զօրանցի դուռը կանգնած սկսան զինաթափ ընել:

Պ. Ապահը և պ. Հրաչեան դէմ դիմաց կանգնած, բոլոր զօրապետներն ու զօրքերն իրենց սուրերի ներքևէն անցան: Իրենց հետն էին նշանակելի քաջ իշխանազուններ, որոնք մինչև վերջ կուռի տաք տեղը մնացին և ժողովուրդն իրենցմով քաջախրուեցաւ. գոքա են՝ Վասիլյանեան Պապ աղայի երեք եղբայրները, իշխաններ Արթին, Յակոբ և Սարգիս, Պալաճեան Նշան աղայի որդի Կարապետ աղան և Պապիկ փաշայի որդիները և Սաչեան Կարապետ աղան, որ շատ մեծ ծառայութիւններ ու քաջագործութիւններ կատարեց:

Չարմանալին արնտեղ էր, որ երբ զօրանցէն դուրս կուգային՝ բոլորը կը համբուրէին Բարթողիմէոս վարդապետի կրծքէն կախուած «կենաց փայտի» վրայ շինուած խաչը... և այն զինւորները, որոնք Նրուսաղէմի մէջէն էին, իրենց թևի հաճիները ցոյց կուտային կարեկցութիւն հայեղու... այդ զինւորները, որոնք եպիսկոպոսն անցած ատեն «ճշ, ճշ» կը կանչէին առաջ:

Իսկ կիները կը փաթթուէին պ. Հրաչեայի, պ. Ապահի և պ. Մլէհի վզերին և կը խնդրէին, որ խնայեն... բայց հակառակ իրենց կարծածի, բոլորն ալ պատուով և քաղցրութեամբ տարինք Զէյթուն և պատուաւոր անների մէջ պահուեցան հանդիստ անվտանգ 600 գերի զինւորներով ու պաշտօնեաներով... Յաւալին այն է սակայն որ մի քանի ընտանիքներ և յիսնապետներ աղատ արձակուեցան ազանների բարեխօսութեամբ, որոց մէջ նշանակելի էր իր չարագործութեամբ ԵՈՒՍՈՒՓ ՄԻՆԼԱԳԵՄԸ, որ մի քանի աղանների միջոցաւ գիշերանց փախեր էր, և այժմ գնացած Ալպիստանի կողմերը և նորէն զօրք ու պաշտպանութիւնը հաւաքելով, ջարդեր, կողոպտեր ու անպատուեր են Ալպիստանի, Եարփուղէ, Էրիճէկի բոլոր հայերը, զոր վարը մանրամասնաբար պիտի պատմենք:

Գերի զօրքերը լեցուեցան քաղաք կառավարական պալատի մէջ, որոց մեծագոյն մասը կը մնայ այժմ հանգիստ և պատուով, կերակուրն ալ աղքատ հայերի կողմէն վճարուելով:

Այս զօրանցի մէջէն դուրս եկան բոլոր զօրքերը զինաթափ, փակուեցան դռները... Այն ինչ ձի հեծան կուսակցութեանս Ներկայացուցիչն ու գործիչները, անհնար էր պատմել ժողովրդի հրճուանքը... Բազմութիւնը հազարաւոր էր... Տեղի ունեցաւ ահա անզուպելի կերպով երկար հրացանածգութիւն ժողովրդա-

*) Տես «Հնչակ» Nr 23.

յին հարբեցնող ուրախութենէն... Կեցցէններն ու ազաղակներն աւելի զօրաւոր էին, քան երկնքի որոտը... Գնդապետը, որ ահ ու գողի մէջ էր մնացած, Կուսակցութեանս Կերկայացուցիչը ձիէն վար իջաւ և գրնդապետին թեւը մանելով, ապահով հասուց վանք...

Ժողովուրդը երկար ժամեր չի ցրուեցաւ զօրանոցի քովէն... Արջապէս ընկաւ այն ծանր տապանաքարը, որ 17-18 տարիէ ի վեր մեծահոգեակ Զէյթունի կրծքին վրայ կը ծանրանար... Հոկտեմբեր 18-ին էր այդ օրը, այդ երջանիկ օրը, այդ կենսատու օրը, որ ուխտուեցաւ Զէյթունի մէջ՝ երգում տալ սերունդէ սերունդ յիշատակելու և սօնելու... և յուսալից ենք թէ ամբողջ ազգը պիտի սօնէ այդ սուրբ օրը... Ծագեցաւ Ազատութեան պայծառ, կենսատու արեւը և դարաւոր սարունկն ազատ շունչ քաշեց...

Գողձ, ով բռնութիւն, դու այսօր ժողովուրդին ոտքին տակն ես... Իսկ ժողովուրդն ազատ և ինքն իր տէրը... և գիտցիր, որ մինչև մահ վճուրէ կուրի, կամ ազատ մեռնելու և կամ ինքն իր տէրը մնալու յաւիտեան:

Կեցցէ Ազատութիւն. Կեցցէ Հնչ. Կուսակցութիւն. Կեցցէ Զէյթուն. Անկցի բռնութիւն...

ԱԶԱՏ ԶԻՅԹՈՒՆԻ ԶՕՐԱՆՈՅԻՆ.

Այստեղ չը պիտի նկարագրեմ այն աւարառութիւնը, որ տեղի ունեցաւ զօրանոցի մէջ գրաւուելէն յետոյ... Զէյթունցիների քաջագործութիւններն ինչքան անբացատրելի են, նոյնքան անբացատրելի է նոցա աւարառութիւնը... Միայն այսչափ կը սենք, որ շատ բաներէ յետոյ Հնչ. Կուսակցութեանս և հայ ժողովուրդի որամագրութեան տակ մնաց 600-ի մօտ մարմինի հրացաններ իրենց ռազմամթերքներով, 25-30-ի չափ ձիեր, վրաններ և մանաւանդ 2 հատ Կրուբի թընդանօթ իր ռազմամթերքներով: Փախան բոլոր պաշտօնեաները շատ աւար թողով զէյթունցիներին... Իսկ խեղճ այգեպանն աղատ, անմաքս կը բերէ քաղաք իր օղին... Ժողովուրդը սկսաւ աղատ ծխել փախստական ծխախոտը...

Արիւր օր աւարը զէյթունցիներին ցրուելէ յետոյ զօրանոցը մնաց «Աւ» զօրագնդի, Մերկերեան շաճիի և Զէյթունի 4 թաղերէն սահմանուած քաջ զինւորների հսկողութեան ներքև:

Իսկ հոկտեմբեր 20-ին Կուսակցութեանս Կերկայացուցիչը և իր ընկերներն իսկոյն իջան Զէյթուն՝ քաղաքի ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւնը կազմելու: Այդ կառավարութիւնը բաղկացաւ երկու ժողովէ. ա.) Ընդհ. ժողով, որ կը բաղկանայ 40 անդամներէ և բ.) Վարչական Կործարիչ Ժողով, որ կը բաղկանայ 16 հոգիէ, 4-ական հոգի ամեն մէկ թաղէ: Կազմուեցաւ նաև քաղաքային օստիկանութիւն. զարմանալի և ուրախալի դէպքն այն է, որ մինչ այսօր ոչ մի խռովութիւն, անկարգութիւն և գողութիւն տեղի չունեցաւ: Կերքին կարգադրութիւններն և ժողովն անդամների անուանց մասին ոչինչ չենք գրեր և կը թողուք ապագային, որ ամեն բան և ամեն արժանիք պարզուի: Այժմ կսկսիմ նկարագրել այն ձախորդ և աղէտալի դէպքերը, որ հոկ. 10-էն ի վեր տեղի ունեցան և դեռ կունենան Զէյթունի շրջակայքներն ու հայ գիւղերու մէջ...

ԶԻՅԹՈՒՆԻ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂԵՐԻ ՈՂՈՐԲԵԼԻ ԱԻՃԱԿԸ.

Հոկտեմբեր ամսի 10-էն սկսեալ, բոլոր հայ գիւղերէն սկսան օգնութիւն աղաղակել, որովհետև թիւրք պաշտպաններ կը դիմեն եղեր վառել, կողոպտել և սպանութիւններ գործել հայկական գիւղերի մէջ: Այդ գիւղերէն նշանակելի են. Եէնիճէ-Գալէի, Անապատի, Հալ-Լեռան, Թէլէմէլիքի, Շիվիլի-Կիի, Պուշտուգի հայաբնակ գիւղական համայնքները և Տաշ-Օլուղի, Կապանի, Կոկիսոնի, Քերէճի, Կէօլ-Փուշարի, Հէյբի և Տէյրի մէն-Տէրէսի հայկական մեծ գիւղերը:

Հոկտեմբեր 19-ին Տէյրի մէն-Տէրէսի և Կոկիսոնի թիւրքերը հաւաքուած էին 2 ու գուր-Հիսար թիւրքական ամուր գիւղի մէջ Ֆրանսուզի վրայ յարձակելու և արգէն ֆրանսուզի մօտակայ հայ գիւղերէն մի քանի տուն վառել էին: Ֆրանսուզիներն իմանալով եղած պատրաստութիւնը, 150 հոգով կը դիմեն 2 ու գուր-Հիսար հաշտութիւն և բարեկամութիւն կնքելու, բայց հայերը չի ձեռնարկ թիւրքերը կսկսին կրակել: Այս ժամանակ հայերն ալ կըսկսին նոյն հրացաններով պատասխանել: Թիւրքերն եղեր են մօտ 300, իսկ հայերը հողիւ 150 հոգի: 2 ու գուր-Հիսարըն արգէն ծանօթ է թէ ինչ ամուր գիրք ունի, մի կատարեալ բերդ է. պատմութեան մէջ նշանաւոր է Կանչի անուան տակ: Կուր տեղի կունենայ 4 ժամ. թիւրքերէն կը մեռնի 70 հոգի, իսկ հայերէն մի մեռեալ և 4 վիրաւոր: Թիւրքերը կը թողուն ու կը փախն 2 ամուր լու սասած չէրքէզներ գիւղը: Արգէն Կանչի բոլոր ստացուածքը վասիլոսեան Կարապետ աղային լինելուն, կը մնայ հայերին, իսկ չէնքերի մէջ այժմ կը բնակին Կոկիսոնի և Տաշ-Օլուղէն փախած հայերը: Սոյն կուր տեղի ունեցաւ հոկտեմբեր 20-ին:

Իսկ հոկտեմբեր 20-էն առաջ կառավարութիւնը և թիւրք աղաները կը դիմեն Տաշ-Օլուղի, Կոկիսոնի, Պուշտուքի, Քիրէճի, Թափուգի, Կէօլ-Փուշարի, Տէյրի-մէն-Տէրէի, Ճամուս-Հէյիլի հայկական մեծ գիւղերի պետերին, որոնք կատարեալ հպատակութիւն կը յայտնեն՝ օմ: Կառավարութեան և կը խոստանան երբէք չը միանալ Զէյթունին, Ալապաշին և Ֆրանսուզին, որոնք բռնութեան ու հարստահարութեան տակ ապստամբ էին դարձեր, և ի նշան հպատակութեան կը յանձնեն իրենց բոլոր զէնքերը, վառօդներն ու կապարները և կանոնաւոր կերպով կը վճարեն տէրուական հարկը, հակառակ այն բոլոր խրատներին ու միջերային օգնութեան, որ իրենց ուղարկուած էր, որպէսզի ամենքը Քիրէճ գիւղը հաւաքուին, որի գիրքն ամուր էր, և պաշտպաններ իրենք զիրենք: Կառավարութեան մեքենայութիւնէն խաբուելով կը մնան իրենց գաշտային գիրքի մէջ և կը յանձնեն իրենց զէնքերն ու ռազմամթերքը: — Հոկտեմբեր 20-ի, գիշեր ատեն, Երիճէ-Կի և Կոկիսոնի կանոնաւոր զօրքերը միացած թիւրք պաշտպանների և չէրքէզների ու քիւրդերի հետ, Կոկիսոնի միւտիւր չէրքէզ Մէմէտ բէկի հրամանատարութեան ներքև կը կոխեն վերոյիշեալ գիւղերը... Ո՞ր հայի աղբիւրների թելերը ամուր կը մնայ և չի կըտրուի լսելով այդ գիւղերի գլխին անցած աղէտալի դէպքերը... Ձալալէգ գիւղի պատմութիւնը տեղի ունեցաւ այդ խեղճ գիւղերի վրայ, որոնք իբր հաւատարիմ հպատակներ անհաւատարիմ աւաղակ կառավարութեան իրենց յիմարութեամբ զոհ գնացին և իրենց գիւղերն այսօր աւերակ դարձած են Մասունի աւերակների նման... և դեռ սուլթանը բարենորոգութիւն (.....) կանէ Հայաստանի մէջ... Ո՞ր են պօռո-

տախտ, դիւրախաբ հայեր... ամբողջ Կոկիսոնի դաշար մուխով ու ծուխով է լեցուած... 16-ի մօտ հայկական գիւղերու աւանների մոխրակոյտն է մնացեր... Եւ եթէ ուշանայ օգնութիւն, մի քանի օրէն մնացած գիւղերի ու քաղաքների ծուխն ալ կը համնի շահամուլ Եւրօպայի քթին... և ալ մնաս բարեալ հայութիւն... Օգնութիւն, անտարբեր հայեր. հայ ժողովուրդն իր պարտքը կատարեց. նա չէր կարող համբերել. միակ, կենսական միջոց էր նորա համար ապստամբութիւնը. բայց մէկ ամսէն աւելի դիմանալ, նա երբէք չէր յուսար... Ինչքան հրձուանքով նկարագրեցի հայ ժողովրդի յաղթանակը, նոյնքան գրիչս արիւնի մէջ թաթախած, կարմիր և ողբաձայն կը գրեմ հայկական գիւղերի աւերումը... հայ մայրերը թուփերի տակ թողն իրենց մանուկները... հայ կիներն ու կոյսերը մութ գիշերուան մէջ պղծուեցան և գեղեցիկները գերի գնացին Կոկիսոնի, Ալպտանի, Եարփուզի և չէրքէզ գիւղերի հարէմների մէջ... Բոսիկի փախած հայ լաճերը հաց պատսպարան և օգնութիւն կաղաղակեն... հայութեան դարավերջն է. օգնութիւն... Իսկ եթէ գարձեալ անտարբեր մնաք դուք և Եւրօպան... մնաք բարեալ ամենքդ... հայութիւնը վերջացած է ի Կիլիկիա...

Այժմ եղած վնասների ստուգութիւնը դեռ ծանօթ չէ, բայց միայն հաշիւը կը տամ Տաշ-Օլուզ գիւղէն կողոպտուած արջառններին և ցորենին. միւս գիւղերը ասորմէ աւելի հարուստ չէին, շատերն ալ պակաս չէին:

Տաշ-Օլուզ գիւղը Կոկիսոնէն մի ժամ հեռաւորութեամբ՝ դաշտի վրայ թիւրքախառն մի գիւղ էր. հայերը 120 տուն էին. ահա նոցա կրած վնասները, նուազական կերպով: — 700 արածող արջառ (եղ, կով, գոմէշ). 400 լուծ քաշող արջառ (եղ և գոմէշ) 170 աւանակ. 50 արու և մատակ ձիեր. 3000 այծ, 48,000 քիլէ ցորեն, որ կանէ 336,000 օխա: Մէկ-գի կը թողունք կողոպտուած կահ կարասիները, ամանները, անկողինները, մանաւանդ պանիր ու եղը, որ տե՛նտաղքատ տունը 3 տիկ կուեննար. մեծ քանակութեամբ զարդեղէն կողոպտուեր են: Եկեղեցին մտնելով կողոպտուեր են բոլոր սպասներն ու անօթները և եկեղեցին պղծելէ յետոյ դուրս կը գան: Գիշերանց լինելուն յայտնի չէ թէ քանի մարդասպանութիւն տեղի ունեցեր է. միայն թէ շատ կիների ու կոյսերի պատիւը բռնաբարուեր են և Կոկիսոնի գիւղապետ հաճեցի Գալաթեան Կարապետ քէհեայի կինը, հարսը և աղջիկները Կոկիսոնի հարէմն են տարեր շատ մը կոյսերու հետ. հազիւ 3 օր քալելէ յետոյ մերկ, բոլորովին մերկ ու բոսիկ, անօթի ու ծարաւ 10,000 հոգի, կին, մարդ, աղջիկ և երեխայ, սովալուկ ուրուակամների նման լեցուեցան Զէյթունի, Ֆրոնտուզի, Թեքերի, Վարի Մխալի, Մափլարի, Հաճի Տէրէի, Թանիրի և Տէճիկէլի փողոցների մէջ, և մարախի նման փողոցի փշուրներն ու խտտերը կը լափեն...

Թշնամիէն աւելի սոքա սարսափ աղբեցին Զէյթունին և ութ օր չի անցնիր բոլորի սովալուկ մեռնելը ակներև է... Իսկ Եարփուզի մէջ կապեր են էրիկ մարդիկը, կիներն ու աղջիկները անպատուեր և ի վերջոյ բոլոր երիտասարդներն հոտորեր... Անպիտան կառավարութիւն ու կեղտոտ պաշտօնեաներ... մենք իրենց կիներ մեր քոյրերի նման պատուեցինք, կերակրեցինք և դեռ մնացածներն ալ այդպէս պատուով կը պահենք, բայց իրենք երաշխաւորութեան տակ մեկնելով ինչ

չարիքներ հասուցին... Կոտորածների և վնասի թիւը յայտնի չէ, բայց բոլորը Տաշ-Օլուզի չափ հարուստ էին, սորա վիճակի նման կողոպտուած, քանդուած կամ հրդեհուած գիւղերն ու աւաններն են:

Տաշ-Օլուզ 120 տուն հայ: Կոկիսոն 75 տուն հայ: Քիրէճ, զուտ հայ 80 տուն: Շէյխի 20 տուն հայ: Կէօլ-Փուենար զուտ 20 տուն հայ: Տէյիր-Մէն-Տէրէսի 75 տուն, Պուենտուգ զուտ հայ 100 տուն: Սիսնէ զուտ հայ 30 տուն: Եարփուզ 120 տուն հայ: Թափուուլու զուտ 60 տուն հայ: — Ասոնց բոլորը կողոպտուած են, այրուած, քանդուած Կոկիսոնի թուրքերի և չէրքէզների կողմէն. մէկ ասեղ իսկ չեն կարողացեր ալատել փախողները. շատ վնաս կայ. մանաւանդ շատ հայ աղջիկներ ու կիներ պակաս են:

Անտերուանի գայմագամութեան կողմն ալ Եայիճ օղլի ասած բռնապետ թուրքն իր գլխին հաւաքած 7-800 պաշիպօղուքի Մէկմէն (պաշիպօղուք բանակ) 6 օրէ յարձակում կը գործէ Շիփլիկի քաղ հայաբնակ գիւղերու վրայ, այնպէս որ հոկտեմբեր 23-ին այլ ևս սպառելով շիփլիկցիների ռազմավորքը փախեր են Կապանի հայերի մօտ: Շիփլիկին հայաբնակ գիւղերու մի համայնք է, որ կը բաղկանայ 200 տունէ: Բոլոր իրենց տունները վառուեր ու քանդուեր են, ըստացուածքնին մնացեր է թուրքերին և միայն իրենց կեանքն ու պատիւը փրկելով՝ հազիւ ապաստաներ են Կապան, որ այսօր կամ վաղն անպատճառ պիտի ենթարկուի Կոկիսոնի հայերի վիճակին, որովհետև չորս կողմէն թուրք սէկմէներով պաշարուած է և իրենք ալ անոնց յիմարութեան մասնակցեր են, ղէնքերնին յանձնելով:

Գարձեալ Եայիճ օղլին, առանց դիմագրութեան ութ օր առաջ քանդեց և կողոպտեց Եէնիճէ-Գալէի և Անապատի հայկական գիւղերը, որոնք 400 տունէն աւելի են:

Հայ-Աեռան վրայ ևս շատ հայկական գիւղեր քանդուած և կողոպտուած են, որոնց մանրամասնութիւնը մեզ կը պակասի. այսչափ միայն լսեցինք, որ այնտեղ կողոպտուած բոլոր գիւղերու մարդերը սպաններ են և կիները գերել հարէմների մէջ: Սոյն աղէտալի կոտորածները տեղի են ունեցեր մանաւանդ Տէրէ-Վեափուրի կողմերը:

Իսկ Զահանի եզերքն եղած Նէտէրլի և Քիւրթէլ թրքաբնակ գիւղերը, որոնք 400 տունէ կը լինի, 18 օր է թէլէմէլքցիները քաջաբար կը դիմագրեն և չեն թողուր, որ ներս մտնեն... բայց չեն կարող երկար դիմագրել:

ԶԵՅԹՈՒՆԻ ԵՒ ԱԼԱՊԱՇԻ ՎՐԱՅ ԵՎԱԾ ՆՈՐ ԲԱՆԱԿԸ.

Հոկտեմբեր ամսոյ 24-ին երկու զօրաւոր բանակ եկաւ Զէյթունի և Ալապաշի վրայ: Մէկն Ալպիստանի ճանապարհով, որ եկած բանակ զրած է Զէյթունէն 4 ժամ հեռաւորութեան վրայ Էրիճէկ ըսուած տեղը և կը բաղկանայ 2,000 կանոնաւոր զօրքերէ և պաշիպօղուքներէ և օր-օրի մեծ քանակութեամբ կաւելնայ Զէյթունի վրայ քալելու համար: Իսկ միւս մեծ բանակը գրուած է Ալապաշի դիմացը, Զահանի վերի կամուրջի գլխին, որ կը բաղկանայ 8,000 կանոնաւոր զօրքերէ և պաշիպօղուքներէ, որոց մեծագոյն մասը կը բաղկանայ Բէրտուաի թուրքերէն: Ամեն օր սոյն բանակի թիւը կաւելնայ նոր զօրքերով ու պաշիպօղուքներով. կառավարութիւնը դեռ անբաւական կը համա-

րէ Զէյթունի վրայ քայելու համար: Ամբողջ բանա-
կը պիտի կազմուի (ստոյգ տեղերէ ըսեցինք) 30,000
կանոնաւոր զօրքերէ, պաշտօնագրերը մեկտէ թողուի:
Այլապաշի վրայ յարձակեցան. գիւղացիները քաջաբար
գիմադրելէ յետոյ ռազմավթերը սպառեցաւ, որոց կէ-
սը Զէյթուն փախան և կէսն ալ Ղարա-Քիւթիւն և
Կիւրէօիսի բերդի կողմէ քաշուեցաւ. իսկ թշնամին
250 տուն աւարի տալէ յետոյ բոլորն ալ վառեց ու
մոխիր դարձուց...

Ստոյգ է, որ Զէյթունը քաջութիւն ունի 150,000
զօրքերի գիմադրելու .. բայց թո՛ւք ու մո՛ւր այն հա-
յերին, որ անոր և անպաշտպան թողուցին Զէյթունը...
Առիւծ Զէյթունը, որ իր շրջականերով 15,000 զէնք
բունող սբանչելի քաջեր ունի, այսօր 10,000 գիւղացի-
ներ թափուած են իր գլխին. արդէն ինքը չունի ուտեստ,
որտեղէն հայթայթէ սոցա կերակուրը: Ահա մէկ ամիս է,
որ կանոնաւոր պատերազմը կը շարունակուի. ստոյգ հաշ-
ուով 500,000-էն աւելի հրացան պարպուած է հայե-
րի կողմէն. բոլորի ռազմավթերը միայն Հնչակեան Կուսակ-
ցութիւնս է նախաձեռնած և պաշարած... Օգնութիւն
կաղաղակենք... Զէյթունցին մինչև վերջ պիտի կռուի,
կռուելով պիտի մեռնի... պատուով պիտի նահատա-
կուի... արդէն նա մեռած էր քաղցէն... այժմ 10,000
մարդ-մարախներ ևս աւելացան իր վրայ... վիճակնիս
սոսկալի է. ժամ օր հասական... Օգնութիւն, օգնութիւն,
բարեխիղճ հայեր... Այլ բաւ է անտարբերութիւնը.
առիւծ Զէյթունը թշնամի բանակի առաջ չէ, որ
կը խոնարհի, այլ քաղցէն, զէնքի ու ռազմավթերի
նուազութեան առաջ... Զէյթունի վճռական նըշա-
նաբանն է Մահ կամ Ազատութիւն...

Հոկտեմբեր 26. Այսօր կէս օրուայ մօտ 400-ի
չափ քաջեր զիմեցին դէպի Այլապաշ յուսահատական
կռիւ մղելու և ազատելու խեղճ Այլապաշի եղբայր-
ները, որոնք բոլորովն պաշարուած են թշնամի բա-
նակէն և բոլոր տուներն այրուեր... Հայկական բա-
նակին առաջնորդեցին Կուսակցութեան Գործիչներէն
պ. Հրաչեան, Պօղ-պայիրի անուանի թաղէն Չաքրեան
Պետրոս աղան և Պալճեան Կարապետ աղան, 18
տարեկան պատանի իշխանազուն քաջերէն ապստամ-
բապետ՝ Մեղիսեփեկ Կոչուտեան: Պօղ-պայիրի
մնացած քաջերը Թէլէմէլիքի հայերին գնացին օգ-
նութեան: Վերի թաղէն Սարգիս աղա Նորաշխարհ-
եանը և Պապիկ փաշայի որդիքը. իսկ քաջերէն, ու-
տիկան Նշան Նորաշխարհեանը Աճի Թեքը
(դառն որթը) — այս անունը թուրքերէն մկրտուած
է — Սուրէնեան թաղէն. Պապ աղայի եղբայր Յակոբ
Վասիլոսեան իշխանը և Սուրէնեան Կարապետ
իշխան ծերունին (մեծ իշխանի որդին), և ապստամբա-
պետ Մերկենեան հաճին և Մերկենեան Կա-
րապետ աղան: Յաջողութիւն մեր քաջերին...

Օգնութիւն, օգնութիւն... Զէյթունը կրակի և
պաշարման մէջ է... Կեցցէ՛ Ազատութիւն:

ՏՕՐՈՍԻ.

**ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍԱՍՄԲՈՒԹԻՒՆԸ.
ՄԻՆՉԵՒ ԶՕՐԱՆՈՅԻ
ԳՐԱՒՈՒՄԸ.**

Զէյթուն-վանք, 16 հոկտ. 95.

Երէկուանէ ի վեր սոսկալի կռուի մէջ ենք... Անց-
եալ երկու ամսուան մէջ կառավարութիւնը եօթ-ութ

անգամ կոխեց Այլապաշ հայաբնակ գիւղը, ուր իբր
թէ 2,000 անգլիական զօրքեր կան: Այլապաշցիները
կը դիմադրէին և անձնատուր չէին ըլլար և ամեն ան-
գամ, երբ յարձակում կը կրէին, կը քաշուէին ըն-
ները: Անցեալ ամսուան վերջերը Մարաշի հարիւրա-
պետ չէրքէյ հաճի Ասլան աղան եկաւ 15 ոստի-
կաններով Զէյթուն, ուր կը փորձէր խուզարկութիւն-
ներ ընել զէնք և այլն մինչև վերջին դանակը գտնե-
լու և առնելու համար: Այդ տեղէն գիշերանց անցաւ
Բերգուսի թըքաբնակ գիւղերը, ուրկէ 100 հոգի
պաշտպօղուք առած՝ յարձակեցաւ Այլապաշի վրայ: Այլ-
ապաշի հայերը գիմադրելով՝ քաջաբար ետ մղեցին:
Յաջորդ օրը, հոկտեմբեր 7-ին, Հաճի Ասլան մէկ այլ
անցքով ուզեց մտնել Այլապաշ. այդ օրը ևս հայ
գիւղացիները մի ժամ կռուելով, սպաննեցին ոստիկան
մը և կրկին յետ փախուցին թշնամին. գիւղին մէջ ալ
սպաննեցին երկու թիւրք ոստիկան, որոնք հայերը լը-
տեսելու եկած էին:

Գարձեալ հոկտեմբեր 7-ին Սալուսթա օղլէ
Իւմմէտը, որ յայտնի ավազար աւաղակ է, օր ցերե-
կով կը կոխէ Ղուժարլը սասձ քիւրդ աշերէթը,
ասորմէ պահանջելով իր կինը, զոր ղուժարլըցիները
բունի յափշտակեր էին: Յարձակումը տեղի կունենայ
Ֆրանսուզէն 3 ժամ վեր՝ Սէկ ըսուած նեղ անցքին
վրայ և ղուժարլըցիներէն կը սպաննուին 3 հոգի և 7-ն
ալ կը վերաւորուին:

Այս դէպքին վրայ Մարաշէն կը ղրկուին հաղա-
բապետ մը, վեց ոստիկան, բժիշկ մը և քննիչ մը և —
իբր ատոր համար եկած ըլլային — կրակին նեղել,
ծեծել, կապել, տանջել Պուժարլու գի, Թէլէմէլիքի
հայաբնակ գիւղերի բնակիչները, որոնք ձարահատեալ
կը գիմեն Ֆրանսուզի հայերուն՝ օգնութեան: Երբ
Ֆրանսուզէն աղաներ կերթան հազարապետին և կը
խնդրեն որ հանգիստ թողու թշուառները, հազարապե-
տը զանոնք զինամափ կրնէ և կը կապէ: Ատոր վրայ
Ֆրանսուզի երիտասարդները կատաղած կը յարձակին և
կը սպաննեն հազարապետն ու հինգ ոստիկաններ, կը
խլեն անոնց մարմիններն ու ձիերը: Ոստիկաններէն
մին հայ ըլլալուն, միայն զէնքը կանոն և զինքը ա-
զատ կը թողուն, ազատ կը թողուն նաև բժիշկն ու
քննիչը: Նոյն օրը Ֆրանսուզցիները սպաննեցին հարիւ-
րապետ մ'ալ, որ Հաճինէն գալով կը գրգռէր Կո-
կիսոնի թրքերն ու չէքքէզները, որպէսզի հայերի վը-
րայ յարձակին: Եւ այժմ արդէն կիմանանք որ այդ
կողմերէն և Ազիզիյէ-էն 4,000 հատմիէ զինուորներ
պատրաստուեր են յարձակելու հայերի վրայ և կոտո-
րելու: Հիմակ Զէյթունն և իր շրջակայ գիւղերի հա-
յերը շրջապտուած են ամեն կողմերէ:

Հոկտեմբեր ամսոյս 12-ին ալ Մարաշէն 150 զին-
ւոր եկան և բանակ դրին Այլապաշի գիմաց, Ջահանի
հարաւային ափի վրայ, Մասխըթլի թըքաբնակ գիւղի
մօտ. հարիւրապետը և խօջանները ցրուեցան Բերդուսի
և Սարը-Չուրուքի թըքաբնակ գիւղերը և 1,000-
1,500 մարդեր հաւաքելով՝ բաշխեցին անոնց կանո-
նաւոր հրացաններ ու ռազմավթերը հրահանգելով Ա-
յլապաշի վրայ քայելու: Նոյն օրը բոլոր հայաբնակ գիւ-
ղերը հաւաքուելու հրահանգ ղրկուեցաւ Հնչակեան
Կուսակցութեան Կիլիկիոյ Նահանգային Վարչութեան
կողմէ, և ցրուեցան երեք Յայտարարութիւններ
հայ ժողովրդեան ուղղեալ այդ վարչութեան, Զէյ-
թունի Հնչակեան Վարչութեան և Կուսակցութեան Կենտ-

բօնի կողմէ: Ամենէն առաջ տրապազցիները գումարուեցան և մի քանի հարիւր հոգիէ բանակ կազմեցին: Յետոյ անմիջապէս կուռի դաշտը դիմեցին Մ ա վ Ե Լ ա ր գիւղի երիտասարդներն իրենց քաջ և անձնուէր գիւղապետ Հ ա ճ ի Մ ա ր տիրոս աղայի առաջնորդութեամբ: Հետ- ըզհետէ եկան Ա Լ ա բ օ զ ան Փ ա ն ո ս աղան, Մ խ ա Լ է ն Տ է Լ - Ա ր թ ի ն աղան, Ֆրոնուզէն գիւղապետ Ե Ղ ի ա յ ի և Թ է Լ է մ է Լ ի ք է ն Տ է ր Մ ա ր տիրոսի առաջնորդութեամբ, բոլորն իրենց քաջերով բանակ- ներ կազմած: Իսկ Չէյթուլի վերի թաղի իշխանը, Պ ա պ ի կ փաշայի եղբայրը Ն ա զ ա ր է թ չ ա վ ու շ ը, հայ- րենիքի ազատութեան սիրով վառուած՝ թողուց իր ոս- տիկանական պաշտօնը և 60 քաջերով մտաւ Հնչա- կեան ապստամբական դրօշի տակ: Այդ բոլոր քաջերի բանակը դրուեցաւ թշնամիի դիմաց, արևելեան ափի վրայ, Չ ա խ Լ ու - Տ է ր է ը ս ու ա ծ տեղը, ուր ասկէ 35-38 տարի առաջ բանակ էին դրեր 45,000 չէր- քէզների դէմ:

Հոկտեմբերի 15-ի կիրակի օրուայ առաւօտուն զարմանալի և անպատմելի յարձակումը գործուեցաւ հայերի կողմէն զիրենք պաշարող մեծաթիւ զօրքերու ու պաշտպաններու դէմ: Այդտեղ պատերազմական գործերու կարգադրութիւնները յանձնուեցան Շ ա մ - ք է շ ի շ Ե ա ն , Հ ա ճ ի Փ ա ն ո ս ի ն և Ն ա զ ա ր է - թ ի ն : Արշալոյսին մի ժամ մնացած՝ ժողովուրդային հե- րոս և քաջ ասպատակապետ Ջ ա Լ Լ ա դ ր (Տ ա շ - Օ - Լ ու Լ ի ս Յ ի Կ ա ր ա պ ե տ Փ ա ն ո ս Ե ա ն ք ր), զոր կը պաշ- տէ ժողովուրդը և որ ինքը Սուլտիա Մ ա ր օ զօրագնդի անդամ էր, 50 քաջեր առած անցաւ գետը. նոյնպէս քաջերի գնդերով անցան Ա լ ա պ ա շ ի յայտնի գիւղապետ Խ ա չ Ե ր - ք է Տ Ե ա ն և Մ խ ա յ է Լ Ե ա ն Փ ա ն ո ս աղան: Զօրքերի դիրքը մի բարձր բլուրի վրայ էր և զոր խիստ ամրացուցեր էին պատսպարաններով: Հնչակեան զօրագնդերը անտեսանելի կարգապահութեամբ գնացին և պաշարեցին թշնամիի վրանները: Հայերուն յանդգ- նութիւնը այն աստիճան մեծ էր, որ եթէ մի ուղ- մագէտ մարդ տեսնէր անոնց դիրքը, անոնց ըրածը շն- միտ կը համարէր և բնաւ չէր յուսար թէ անոնցմէ մին կազատուէր: Բանակի դիմացն ալ՝ բլուրի վրայ՝ դիզ- ուեցան մի քանի հարիւր հայեր, Ն ա զ ա ր է թ ի , Շ ա մ - ք է շ ի շ Ե ա ն ի , Հ ա ճ ի Մ ա ր տիրոս աղայի և Ա լ ա բ օ զ ան Փ ա ն ո ս աղայի հրամանատարութեանց ներքոյ:

